Ռաֆիկ Խաչատրյան [1]

ԿԻՊՐՈՍՈՒՄ ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Կիպրոս, Արևելյան Միջերկրական, Օսմանյան կայսրության, Բրիտանական կայսրություն, հունական համայնք, թուրքական համայնք, ազգային ինքնություն, կրթություն*

Կիպրոսում էթնիկ հույների պատմությունը սկսվում է դեռևս անտիկ ժամանակներից: Կիպրոսը կարևոր տեղ էր զբաղեցնում անտիկ հելլենական բանահյուսության և դիցաբանության մեջ, այն համարվում էր հունական դիցարանի աստվածուհի Աֆրոդիտեի ծննդավայրը: Պատմության ողջ ընթացքում կղզու բնակչության մեծամասնությունը կազմում էին հույները, իսկ Կիպրոսը հելլենական աշխարհի անբաժանելի մասն էր համարվում:

Ժամանակակից թուրքական համայնքի պատմությունը և առհասարակ թուրք-հունական հարաբերությունները Կիպրոսում սկսվեցին 1571 թ., երբ կղզին անցավ Օսմանյան կայսրությանը: Կիպրոսն Օսմանյան կայսրության համար ուներ ստրատեգիական նշանակություն: Կղզու գրավումով, թուրքերը նպատակ ունեին ապահովելու իրենց մերձավորարևելյան տիրույթների (Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս) և ծովային առևտրի անվտանգությունը: Կղզու գրավման ընթացքում կաթոլիկները կրեցին ծանր կորուստներ և կորցրեցին իրենց գերակա դիրքը: Կիպրոսի բնակչության մեծամասնություն կազմող հույն ուղղափառները, ընդհակառակը, դժգոհ լինելով կաթոլիկ վենետիկցիների կառավարումից և ճնշումից, մեծ դիմադրություն ցույց չտվեցին թուրքերին և մեծ կորուստներ չկրեցին:

Օսմանյան կայսրության դիրքերն ամրապնդելու նպատակով, սուլթան Սելիմ 2-րդի հրամանով, Կիպրոսում սկսվեց փոքրասիական օսմանյան տիրույթներից մուսուլմանների բնակեցում: Գաղթած բնակիչների թիվը տարբեր հեղինակների մոտ տարբեր է, իրականին ավելի մոտ է թվում 20 հազարը, այս թվին պետք է գումարել նաև Կիպրոսի օսմանյան կայազորը: Իրականությանը շատ ավելի մոտ են 1640 թ. բնակչության տվյալները, ըստ որի մուսուլմանները կազմում էին Կիպրոսի 120-140 հազար բնակչության մեկ քառորդը[2]:

---

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ասպիրանտ, էլ. փոստ՝ rafael.khachatryan77@gmail.com

[2] Dodd C., The History and Politics of the Cyprus Conflict, London, 2010, p. 1.

Գաղթած մուսուլման բնակիչներին հիմնականում հատկացվեցին վենետիկյան ազնվականներից խլված հողերը, ինչի շնորհիվ վերաբնակեցումը տեղի ունեցավ ամբողջ կղզով: Սրանով է պայմանավորված կղզում մեծ թվով խառը բնակչություն ունեցող բնակավայրերի առկայությունը և մուսուլմանական համայնքի ապակենտրոնացումը, որը պահպանվեց մինչև հունական և թուրքական համայնքների միջև տեղի ունեցած բախումները և տեղաշարժերը 1964 թ. և 1974-1975 թթ.[3]: Հետագա դարերում Կիպրոսը կորցնում է իր նախկին քաղաքական նշանակությունը՝ կապված աշխարհագրական հայտնագործությունների և առևտրային ուղիների փոփոխությունների հետ և դառնում է Օսմանյան կայսրության աքսորավայր (քանի որ կղզում ավանդաբար տարածված էր մալարիան): Այս ամենն իր արտացոլումն է գտել թուրքերենում պահպանված ասացվածքում՝ «Նա, ով ասում է ճշմարտությունը, աքսորում են Կիպրոս»[4]: Կիպրոսի մուսուլմանական համայնքը համալրվում է նաև այս աքսորյալներով:

Կղզու Օսմանյան կայսրությանն անցնելու ամենակարևոր փոփոխությունը Կիպրոսի հունական ուղղափառ եկեղեցու դերի բարձրացումն էր: Օսմանյան կայսրությունը, որը կառավարվում էր միլլեթների սկզբունքով, հատուկ դեր հատկացրեց Կիպրոսի ուղղափառ եկեղեցուն, որը հետագայում ամրապնդվեց 1572 թ., 1660 թ., 1754 թ. սուլթանական ֆերմաններով[5]: Կիպրոսի ուղղափառ եկեղեցին ստացավ քրիստոնյա բնակչությունից հարկեր հավաքելու, քրիստոնեական համայնքի գործերով զբաղվելու և սուլթանին անմիջապես դիմելու իրավունք: Այսպիսով, կղզու քրիստոնեական համայնքը ստացավ որոշակի ներքին ինքնավարություն, ավելին, քրիստոնեական համայնքի գլուխ կանգնեց հասարակության ամենակրթված խավը՝ հոգևորականությունը: Հատուկ պետք է նշել նաև հոգևորականության և հոգևոր դպրոցների մշակութային, կրթական դերը հունական համայնքի ազգապահպանության և հելլենական ինքնագիտակցության զարգացման մեջ:

Չնայած Կիպրոսի ուղղափառ եկեղեցուն տրված արտոնություններին, պետք է փաստենք, որ մուսուլմանները կղզում ունեին ավելի լայն իրավունքներ: Մուսուլմաններն Օսմանյան կայսրության տիրապետության ընթացքում օժտված էին հարկային,

[3] Attalides M., Cyprus: Nationalism and International Politics, New York, 1979, p. 1.
[4] Гаджиев Ф., Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, Москва, 2008, с. 30.
[5] Бредихин О., Эволюция межобщинных отношений на Кипре, https://textarchive.ru/c-2044177-p6.html

ծառայողական, դատական և այլ արտոնություններով: Սրանով պայմանավորված, սկսվել էր քրիստոնյաների իսլամացման գործընթաց: Կիպրոսում աստիճանաբար ձևավորվում է նաև «միջանկյալ» կամ «հիբրիդային» բնակչություն՝ լինոբամբակներ, որոնք ունեին կես-կես և՛ քրիստոնեական, և՛ իսլամական հավատալիքներ և երկու կրոնների ծեսերին էլ հետևում էին[6]: Սակայն, հաշվի առնելով ուղղափառ եկեղեցու ամուր դիրքերը, բնակչության իսլամացումը լայն տարածում չստացավ:

Միաժամանակ կրոնական տարբերությունների պատճառով, ի վերջո կղզում «միասնական կիպրական» ինքնություն այդպես էլ չստեղծվեց: Կրոնական տարբերությունների խոչընդոտել են Կիպրոսում խառնամուսնություններին կամ, այսպես կոչված, միջհամայնքային ամուսնություններին: Բազմաթիվ հետազոտողներ փաստում են, որ միջհամայնքային ամուսնություններն ավելի շուտ առաջացնում էին կոնֆլիկտ, քան միավորում էին համայնքները: Այս ամենն իր արտացոլումն է գտել նաև ժողովրդական բանահյուսության մեջ, երբ կոնֆլիկտի պատճառը, որպես կանոն հանդիսանում էր թուրքի կողմից առևանգված քրիստոնյա հույն աղջիկը[7]:

Երկու համայնքների հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից, հատկապես հետաքրքիր է խառը բնակեցված բնակավայրերի գոյության փաստը: Ըստ էության, Օսմանյան կայսրության տիրապետության ընթացքում տեղի ունեցած գյուղացիական ապստամբություններն 1578 թ., 1665 թ., 1680 թ., 1712 թ., 1764-1765 թթ., 1783 թ., 1804 թ., 1830 թ. և 1833 թ. իրենցից ներկայացնում էին Կիպրոսի գյուղացիության համատեղ ելույթներ՝ ընդդեմ կառավարող էլիտայի[8]: Այս գյուղացիական բազմաթիվ խռովություններն, ըստ էության ունեին ընդգծված սոցիալ-տնտեսական շեշտադրում և Օսմանյան կայսրության հետադիմական և բռնատիրական կարգերի արտացոլումն էին: Չպետք է մոռանալ, որ օսմանյան շրջանում Կիպրոսի բնակչության մեծամասնության կազմում էին գյուղացիությունը, իսկ գյուղացիական ծանր աշխատանքները ուժեղ գործոն էին երկու համայնքների միավորման և կոնֆլիկտների հաղթահարման գործում:

Կիպրոսի հունական համայնքի ազգային ինքնության զարգացման գործում մեծ ազդեցություն ունեցավ, դեռևս 18-րդ դարի վերջին հույն

---

[6] Nevzat A., Hatay M., Politics, Society and the Decline of Islam in Cyprus: From the Ottoman Era to the Twenty-First Century, Middle Eastern Studies, Vol. 45, no. 6, 2009, p. 913.

[7] Степанов В., Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, Москва, 2012, с. 467.

[8] Бредихин О., նշված աշխ..

մտավորականության մեջ տարածում ստացած, ազգային ինքնության զարթոնքը: Դեռևս 1821 թ. Հունաստանում սկսվում էր ազգային-ազատագրական պայքար ընդդեմ օսմանյան տիրապետության: Հույների ազգային-ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց, Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվում է հակահունական բռնությունների ալիք, որից անմասն չի մնում նաև Կիպրոսը: Չնայած Կիպրոսը զերծ էր մնացել ազգային-ազատագրական ելույթներից, 470 հոգևորականներ, այդ թվում Կիպրոսի ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոսը մեղադրվեցին «ապստամբներին աջակցելու» մեջ և կախաղան բարձրացվեցին, որին սակայն կրոնական հողի վրա քրիստոնյա բնակչության ելույթներ չհաջորդեցին[9]:

Չնայած 1862 թ. Կիպրոսում բրիտանական հյուպատոսարանի զեկույցում ասվում էր. «Մուսուլմանները խաղաղ են ապրում իրենց քրիստոնյա հարևանների հետ քաղաքներում և գյուղերում»[10], սակայն Հունաստանի անկախացումն ուժեղ խթան հանդիսացավ Կիպրոսում հունական էթնիկ ինքնության և հունական ազգային գաղափարախոսության տարածման գործում: Աստիճանաբար մեծ տարածում ստացավ նաև Կիպրոսի բուն Հունաստանին միավորման՝ «էնոզիսի» գաղափարը: «Էնոզիսի» գաղափարի հիմքում ըստ էության ընկած էր պանհելլենական «Մեգալի իդեան» (Մեծ գաղափարը), համաձայն որի Հունաստանի հետ պետք է միավորվեին բոլոր հունաբնակ տարածքները[11]: Կիպրոսում «էնոզիսի» գաղափարի ամրապնդմանը և ազգային ինքնության զարգացմանը հատկապես նպաստում էին Հունաստանի հետ կրթամշակութային կապերը, հունական ծրագրերի հետ համապատասխանեցված դպրոցական ծրագրերը, ինչպես նաև Հունաստանում բարձրագույն կրթություն ստացած հույն-կիպրացիները, որոնք վերադառնալով Կիպրոս դառնում էին «էնոզիսին» հավատարիմ գաղափարախոսներ: Այսպիսով, Կիպրոսի քրիստոնյա համայնքի ազգային ինքնության զարգացումը բուն Հունաստանում տեղի ունեցած գործընթացների ազդեցության տակ, սկսվեց շատ ավելի վաղ, քան մուսուլմանական համայնքի մոտ:

19-րդ դարի երկրորդ կեսին էականորեն բարձրացել էր Արևելյան Միջերկրականի աշխարհաքաղաքական նշանակությունը, ինչը կապված էր առաջին հերթին 1869 թ. բացված Սուեզի ջրանցքով, որը զգալի կրճատում էր Հնդկաստան տանող ծովային ուղին: Սկսվում է պայքար Արևելյան Միջերկրականում ազդեցության գոտիների համար: Իր

[9] Նույն տեղում:
[10] Luke H. C., Cyprus under the Turks 1571-1878, 1921, p. 209-210.
[11] Гаджиев Ф., նշված աշխ., էջ 31.

դիրքերն Արևելյան Միջերկրականում ամրապնդելու համար, Մեծ Բրիտանիան օգտվելով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից, ստիպում է Օսմանյան կայսրությանն իրեն հանձնել Կիպրոսը: Կիպրոսի դիմաց Մեծ Բրիտանիան խոստանում էր Օսմանյան կայսրությանը «զենքի ուժով» ստիպել Ռուսաստանին, վերադարձնել Սան Ստեֆանոյի պայմանագրով իրեն անցած հայկական Բայազետը և Ալաշկերտի հովիտը:

1878 թ. հունիսի 4-ին Կ. Պոլսում կնքվեց «Կիպրական կոնվենցիան», որով Կիպրոսը անցավ Մեծ Բրիտանիային, չնայած դե-յուրե դեռ գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում: Կիպրոսի անցումը Մեծ Բրիտանիային սկզբնական շրջանում մեծ ոգևորություն առաջացրեց հունական բնակչության շրջանում: Այն նպաստեց կղզու բնակիչների սոցիալ-տնտեսական կյանքի բարելավմանը, բարեփոխումներ իրականացվեցին հարկային, վարչական և իրավական ոլորտներում, Օսմանյան կայսրության խճճված հարկային համակարգին փոխարինելու եկավ ավելի կատարյալ բրիտանականը: Բացի դրանից, հույները մեծ հույսեր ունեին, որ Մեծ Բրիտանիայի օգնությամբ, ինչպես 1862 թ. Հոնիական կղզիներն էին փոխանցվել Հունաստանին, այնպես էլ Կիպրոսը կփոխանցվեր Հունաստանին՝ իրականացնելով հույների «էնոզիսի» երազանքը: Այսպես, Կիտիոնի եպիսկոպոսը ողջունելով բրիտանական կառավարչին, ասաց. «Մենք հավատում ենք, որ Մեծ Բրիտանիան կօգնի Կիպրոսին, ինչպես դա արել է Հոնիական կղզիներում, միավորվել մայր Հունաստանի հետ, որի հետ բնականորեն կապված է»[12]:

Բրիտանական վարչակարգը Կիպրոսում, սակայն, ի սկզբանե հավատարիմ մնալով բրիտանական կառավարման աշխարհիկ համակարգին, սկսում է Կիպրոսի ուղղափառ եկեղեցու և մուսուլման հոգևորականության իրավունքների և արտոնությունների սահմանափակում: Այս ամենը հատկապես մեծ դժգոհություն առաջացրեց քրիստոնյա հոգևորականության մոտ, որն էլ գլխավորեց Կիպրոսի ազգային-ազատագրական պայքարը: Ազգային-ազատագրական պայքարում հոգևորականությանը մեծապես աջակցում էր նաև նոր ձևավորված և իր դիրքերն ամրապնդող հույն-կիպրական բուրժուազիան:

Մուսուլման կիպրացիները բավանական համեստ դիրք էին զբաղեցնում Կիպրոսի տնտեսական կյանքում, այդ իսկ պատճառով նոր ձևավորված բուրժուազիան կազմված էր հիմնականում քրիստոնյաներից[13]: Այս ամենը հաշվի առնելով, մուսուլման

[12] Dodd C., նշված աշխ., էջ 3.
[13] Nevzat A., Nationalism amongst the Turks of Cyprus: the first wave, Oulu, 2005, p. 56.

կիպրացիները, որոնք մինչև կղզու բրիտանական տիրապետության տակ անցնելը կազմում էին Կիպրոսի բնակչության 24,98 տոկոսը[14], ի սկզբանե սկսեցին ակտիվորեն համագործակցել բրիտանական վարչակարգի հետ, ընդդեմ լավ կազմակերպված և տնտեսապես ուժեղ Կիպրոսի հունական համայնքի: Բրիտանացիներն իրենց հերթին ստանձնելով կղզու կառավարումն ամենևին նպատակ չունեին միավորել քրիստոնյա և մուսուլման համայնքները, ավելին, Օսմանյան կայսրությունից ժառանգելով միլլեթների համակարգը, նրանք սկսեցին այն կատարելագործել և կղզու բնակչության համայնքների բաժանմանը տվեցին օրինական ուժ: Այս նպատակի արտացոլումն էր Կիպրոսին 1882 թ. «շնորհված» «գաղութային սահմանադրությունը»: Ըստ այս «սահմանադրության», ձևավորվելու էր Գործադիր Խորհուրդ, որը կազմված էր լինելու ամբողջությամբ բրիտանացիներից և Օրենսդիր Խորհուրդ, որի կազմի մեջ մտնելու էին 6 բրիտանացիներ, 3 մուսուլման-կիպրացիներ և 9 քրիստոնյա-կիպրացիներ: Կարևոր է նշել, որ Օրենսդիր Խորհրդում բրիտանացիները մուսուլմանների հետ միասին ունենալով նույնպես 9 ձայն, ունենալու էին վճռական ձայնի իրավունք, ինչը քրիստոնյաների Կիպրոսի կառավարման մասնակցությունը դարձնելու էր «ձևական»: Այսպիսով, բրիտանացիների նպատակն էր, օգտագործելով մուսուլման-կիպրացիներին, վերահսկելի և կառավարելի դարձնել հույն-կիպրական համայնքին: Մեծ Բրիտանիան իր հարուստ գաղութատիրական փորձով շատ լավ գիտեր, թե ինչքան կարևոր է փոքրամասնությանն աջակցելը մեծամասնությանը կառավարելու գործում[15]:

Կիպրոսի երկու համայնքների բաժանումն ավելի խորացնելուն էր ուղղված նաև բրիտանական վարչակարգի վարած կրթական քաղաքականությունը: Բրիտանացիները միասնական կրթական համակարգ ստեղծելու փոխարեն սկսեցին ձևավորել դպրոցներ ըստ էթնիկ պատկանելիության: Խրախուսվում էր Հունաստանից ու Թուրքիայից դպրոցական ծրագրերի ներմուծման և ուսուցիչների ներգրավման պրակտիկան: Այս կրթական փոփոխությունների արդյունքում լայն տարածում ստացան ազգային գաղափարները Կիպրոսի մուսուլման և հունական համայնքներում: Ազգային գաղափարները հատկապես լայն տարածում ստացան հունական համայնքում, ինչի մասին էր վկայում 1897 թ. սկսված Կրետե կղզու

[14] Bouleti E., Early Years of British Administration in Cyprus: The Rise of Anti-Colonialism in the Ottoman Muslim Community of Cyprus, 1878-1922, Journal of Muslims in Europe 4 (2015), p. 75.
[15] Гаджиев Ф., նշված աշխ., էջ 32.

ազատագրական պայքարում հույն-կիպրացիների ակտիվ մասնակցությունը:

Աշխարհաքաղաքական իրավիճակն Արևելյան Միջերկրականում էականորեն փոխվեց Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես: 1914 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիան պաշտոնապես հայտարարում է Կիպրոսի անեքսիայի մասին: Արդեն 1915 թ. Մեծ Բրիտանիան Հունաստանին առաջարկում է փոխանցել Կիպրոսը՝ Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի կողմից ներգրավվելու դիմաց: Սակայն, Հունաստանի անմիջապես պատերազմի մեջ չմտնելու պատճառով, այս առաջարկը կորցրեց իր ուժը: Ըստ բրիտանացի հեղինակներ Հոլլանդի և Մարկիդեսի, դեռևս 1912 թ. Մեծ Բրիտանիան, ի դեմս Հունաստանի Միջերկրական ծովում վստահելի դաշնակից ձեռք բերելու նպատակով, լրջորեն մտածում էր Կիպրոսը Հունաստանին, Քեֆալոնիա (Հոնիական կղզիներում) նավահանգստի դիմաց, հանձնելու մասին[16]: 1923 թ. Թուրքիան Լոզանի պայմանագրով ճանաչեց Մեծ Բրիտանիայի Կիպրոսի անեքսիան և հրաժարվեց Կիպրոսի նկատմամբ հետագա հավակնություններից: Իսկ արդեն 1925 թ. մարտին Կիպրոսը պաշտոնապես հռչակվեց Բրիտանական կայսրության գաղութ:

Կիպրոսի մուսուլման համայնքի էթնիկ ինքնության զարգացման համար հատկապես կարևոր էին 1920-ական թթ., երբ սկսվեց «օսմանական» ինքնությունից թուրքական ինքնության անցման և աստիճանական զարգացման գործընթացը: Այս գործընթացին նպաստում էին բրիտանական վարչակարգի կրթական քաղաքականությունը, ինչպես նաև բուն Թուրքիայում ծավալվող քեմալական ազգայնամոլական շարժումը: Թուրքիայում քեմալական շարժման հաղթանակից հետո սկսվել էր լայն աշխարհիկ բարեփոխումներ, որոնք միտված էին արդիականցնելու վարչական, սոցիալ-տնտեսական, կրթական և այլ ոլորտներ: Այս բարեփոխումների արդյունքում ստեղծվում է նոր այբուբեն, արևմտականացվում է թուրքական կրթական համակարգը, աշխարհիկ փոփոխություններ են կատարվում հասարակական կյանքում: Քեմալական բարեփոխումները նպատակ ունեին ստեղծել «նոր թուրքական» ինքնություն և հավատարիմ էին ազգայնական գաղափարական ոգուն: Քեմալական գաղափարները, դեռևս 1925թ. Լառնակայում բացված թուրքական հյուպատոսարանի ջանքերով, ակտիվորեն տարածվում են նաև Կիպրոսում[17]:

[16] Holland R., Markides D., The British and the Hellenes: Struggles for Mastery in the Eastern Mediterranean 1850–1960, Oxford, 2006, p. 176.

[17] Xypolia I., Cypriot Muslims among Ottomans, Turks and two world wars, Boğaziçi Journal, Vol. 25, no. 2, 2011, p. 113.

Կիպրոսում 1920-ական թթ. ազգային գաղափարների տարածման ու զարգացման գործում հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում բրիտանական կրթական քաղաքականության դերը: Կիպրոսում, ինչպես վերևում նշվել էր, ուսուցումը տեղի էր ունենում ըստ էթնիկ պատկանելության, ինչը բավական հետաքրքիր իրավիճակ էր ստեղծում: Հունական դպրոցներում, որտեղ ուսուցումը տեղի էր ունենում ըստ հունական կրթական ծրագրերի, Կիպրոսը ներկայացվում էր որպես Հունաստանին դեռևս չմիացված կղզի, միևնույն ժամանակ, թուրքական դպրոցների աշակերտները քեմալական Թուրքիան էին համարում իրենց «հոգևոր հայրենիքը»: Կրթական այս քաղաքականությունը որոշ հետազոտողներ համարում են բրիտանական «մեղմ» գաղութային կառավարման ապացույց, իսկ հետազոտողների մյուս խումբն այն բացատրում է «բաժանիր և տիրիր» գաղութային քաղաքականության սկզբունքով[18], ինչը, հաշվի առնելով բրիտանական գաղութային հարուստ փորձը, ավելի իրատեսական է: Կրթական քաղաքականության կարևորության մասին է վկայում նաև այն, որ «իսկական» թուրք կամ «իսկական» հույն «դառնալ» հնարավոր էր համարվում միմիայն կրթությամբ[19]:

Կիպրոսում ազգային գաղափարների տարածումը և բրիտանական հարկային քաղաքականությունն ի վերջո հանգեցրեցին հունական համայնքի 1931 թ. հոկտեմբերյան խռովությանը: Թեև խռովությունը շատ արագ ճնշվեց, բայց 1931 թ. հետո Մեծ Բրիտանիան վախենալով ազգային գաղափարների անկառավարելի աճից, կասեցրեց «կիպրական սահմանադրությունը» և ցրեց Օրենսդիր Խորհուրդը, արգելվեցին քաղաքական կուսակցությունները, հավաքները, Հունաստանից ու Թուրքիայից ներմուծված ուսումնական ծրագրերը, դադարեցվեց Հունաստանից և Թուրքիայից ուսուցիչների ներգրավման պրակտիկան, արգելվեցին նաև հունական ու թուրքական դրոշների, հիմների և ազգային հերոսների նկարների գործածումը: Մինչև 1940 թ. քաղաքացիական ամբողջ կառավարումը փաստացի կենտրոնացվեց բրիտանական նահանգապետի ձեռքում: Բացի դրանից, բրիտանական ճնշումների արդյունքում, 1933-1946 թթ. չէր ընտրվում Կիպրոսի ուղղափառ եկեղեցու նոր արքեպիսկոպոս[20]: Այս սահմանափակումները, սակայն, Երկրորդ Համաշխարհային պատերազմի սկսվելուն պես մեղմացվեցին:

[18] The Middle East and North Africa 2019, 65th Edition, Abingdon and New York, 2018, p. 156.
[19] Ozmatyatli I. O., Ozkul A. E., 20th Century British Colonialism in Cyprus through Education, Eurasian Journal of Educational Research, Issue 50, 2013, p. 3.
[20] Степанов В., նշված աշխ., էջ 470.

Ընդհանուր առմամբ, վերլուծելով Կիպրոսի երկու համայնքների ձևավորման և զարգացման ուղին, կարելի է հստակ նկատել կրոնական համայնքներից ազգային համայնքների վերափոխման գործընթացը: Կիպրոսի բնակչության համայնքների բաժանումն Օսմանյան տիրապետության ընթացքում, ըստ էության հիմնված էր միմիայն կրոնական պատկանելության վրա: Օսմանյան տիրապետության սկզբնական շրջանում ազգային գաղափարները Կիպրոսում տարածված չէին, բնակչության կյանքում ավելի կարևոր տեղ էին զբաղեցնում կրոնական պատկերացումները, միաժամանակ այս շրջանում Կիպրոսի քրիստոնյա և մուսուլման համայնքների միջև բաժանարար գծերն այնքան էլ ակնառու չէին, ինչի մասին վկայում էին համատեղ գյուղացիական ելույթները: Այս վիճակը սկսվում է աստիճանաբար փոփոխվել 19-րդ դարի սկզբին, երբ Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությամբ հույն մտավորականության մոտ սկսվում է ազգային-ազատագրական գաղափարների զարթոնք: Պանհելլենական ազգային գաղափարների տարածմանը մեծ խթան է տալիս Հունաստանի անկախացումը: Մի փոքր ուշացումով, պանհելլենական ազգային գաղափարները մեծ տարածում են ստանում նաև Կիպրոսում, առաջին հերթին նոր ձևավորվող բուրժուազիայի և հոգևորականության մոտ: Հունական ազգային ինքնության զարգացմանը նպաստում է նաև Կիպրոսի անցումը Մեծ Բրիտանիային: Այսպիսով, կարող ենք փաստել, որ ի տարբերություն մուսուլման համայնքի, Կիպրոսում քրիստոնյա-հունական համայնքի ազգային ինքնության զարգացման գործընթացը սկսվել էր շատ ավելի վաղ:

Կիպրոսի մուսուլման համայնքի ազգային ինքնության զարգացումն իր հերթին սկսվում է 1920-ական թթ.: Իսլամական «օսմանյան» համայնքից թուրքական համայնքի վերափոխումը, սակայն, ի տարբերություն հունական համայնքի, մի փոքր «արհեստական» գործընթաց էր, քանի որ մուսուլման համայնքում դեռևս չէր ձևավորվել ազգային գաղափարների հիմնական կրողների խավը՝ բուրժուազիան: Մուսուլման համայնքում, ազգային գաղափարների տարածումն ըստ էության բրիտանական կրթական քաղաքականության և Թուրքիայի քեմալական գաղափարների ակտիվ «արտահանման» արդյունք էր: Կիպրոսի երկու համայնքների «ազգայնացումը» ձեռնտու էր առաջին հերթին Մեծ Բրիտանիային, որը հավատարիմ գաղութային «բաժանիր և տիրիր» սկզբունքին, նպատակ ուներ խորացնելով հունական և թուրքական համայնքների միջև բաժանարար գծերը, ամրապնդել իր դիրքերն աշխարհաքաղաքական կարևորություն ունեցող Արևելյան Միջերկրականում:

СОЗДАНИЕ НА КИПРЕ ДВУОБЩИННОЙ СИСТЕМЫ И ИСТОРИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ

Хачатрян Рафик

(Резюме)

Греко-турецкие отношения на Кипре начались 1571 г., когда Кипр отошел к Османской империи. Для укрепление своих позиций Османская империя начала переселять мусульман из Анатолии на Кипр. Оставаясь верной османской системе управления "миллетов", население Кипра по религиозной принадлежности разделилось на две части. Разделение населения острова в дальнейшем более усилилось во время правления британской колониальной администрации. Благодаря проводимой образовательной-культурной политике британской администрации, мусульманская и христианская общины острова, по сути превратились в турецкую и греческую общины, а разделение населения Кипра по этнокультурной принадлежности фактически было юридически оформлено согласно "Конституции" 1882 года.

THE FORMATION AND HISTORICAL PRECONDITIONS OF THE BI-COMMUNAL SYSTEM OF CYPRUS

Khachatryan Rafik

(Summary)

Turkish-Greek relations in Cyprus began in 1571 when the Island passed to the Ottoman Empire. In order to infix its position in the Island the Ottoman Empire began to settle the Muslims of Anatolia in Cyprus. Being loyal to Ottoman government's Millet system the population of Cyprus according to its religious belonging was devided into two parts. The division of the population of the Island became deeper during the governing of the British colonal ruling. Due to the educational-cultural politics of the British Ruling the Muslim and the Christian communities, in fact, changed into Turkish and Greek communities and the legal power to the ethnic-cultural division of Cyprus population actually was given by the „constitution“ of 1882.